## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 06 >> հունիսի 2012թ. N 37 - Ա

ք. Արմավիր

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի ապրիլի 19-ի թիվ ՊՆ/510-520 գրությունը.

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արամ Հովհաննիսյանին 2012 թվականի հունիսի 11-ից հունիսի 16-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2012 թվականի ուսումնական պատրաստության հավաք-պարապմունքներին մասնակցելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /պետ՝ Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունիսի 11-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

«19» 04 2012 թ.

ԴԿ/510-520

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն վարչապետ,

ՀՀ ԶՈՒ 2012թ. ուսումնական տարվա պատրաստության պլանի համաձայն, ս.թ. հունիսի 11-ից 16-ը ՀՀ ՊՆ վարչական համալիրում ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների պաշտոնատար անձանց հետ պլանավորված է հավաք-պարապմունքների անցկացում:

Հաշվի առնելով, որ հավաք-պարապմունքները անցկացվելու են «ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ-2012» համատեղ զորավարժությունների առաջին փուլի՝ պետական կառավարման մարմինների հետ շտաբային մարզումների նախաշեմին, խնդրում եմ Ձեր համապատասխան ցուցումը հանրապետական գործադիր և տեղական կառավարման մարմինների ղեկավարներին՝ անցկացվող հավաք-պարապմունքներին զորահավաքային պատրաստության հարցերով մշտապես զբաղվող և վերոնշյալ զորավարժություններին ներգրավված պաշտոնատար անձանց մասնակցությունը ապահովելու վերաբերյալ՝ նախօրոք ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացնելով նրանց տվյալները:

Միևնույն ժամանակ, խնդրում եմ Ձեր համաձայնությունը ՀՀ էկոնոմիկայի և արտակարգ իրավիճակների նախարարներին՝ հավաքների մասնակիցների հետ հունիսի 14-ին, համապատասխանաբար ժամը 11:00-12:50 և 16:00-17:50 ՀՀ ՊՆ կոլեգիայի նիստերի դահլիճում անցկացնել 2 ժամ տևողությամբ մեկական դասախոսություն՝ թեմաները շաղկապելով ս.թ. սեպտեմբերին անցկացվելիք «ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ-2012» համատեղ զորավարժության նպատակների հետ:

Հարգանքով՝

Ս. ՕՀԱՆՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5. Հեռ.(+374) 10 29-44-01, ֆաքս (+374) 10 29-43-12
г.Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374) 10 29-44-01, Факс: (+374) 10 29-43-12

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
017-10795
20 04 12